# ՕՇԱԿԱՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԴՊՐԱՏՈՒՆԸ

*Բարեգործությունը դարձել է դավանանք ազգիս նվիրյալ զավակներից շատերի համար, որոնց անվանացանկը լրացնելու եկավ ևս մեկը՝ ամերիկահայ Ջիվան Կոբոյանը, ում ընտանիքի անդամները, հազիվ մազապուրծ Թուրքի յաթաղանից, երկար դեգերումներից հետո, հաստատվեցին Զիկագոյի նահանգում:*

*Տոնական տրամադրությամբ սույն թվականի սեպտեմբերի 6-ին Արագածոտնի նահանգի ղեկավարությունն Օշական գյուղում ընդունեց պատվավոր հյուրերին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի նախագահությամբ:*

*Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու մուտքի մոտ Նորին Սրբությանն ու իր շքախմբի անդամներին դիմավորեցին ավանդական աղ ու հացով, դհոլ-զուռնայով: Ապա Հայոց Հայրապետը «Հրաշափառ»-ի երգեցողությամբ մուտք գործեց Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի, ուր, ամենքի հետ մեկտեղ, վկան եղավ Նորաբաց Ներսես Աշտարակեցի համալսարանի առաջին ուսանողների հանդիսավոր երդման արարողությանը:*

*Նախ ներկաներին ողջույնի ու բարիգալստյան խոսք ասաց Արագածոտնի թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Նավասարդ վարդապետ Կճոյանը, ապա, Նորաբաց համալսարանի ռեկտոր պրոֆեսոր Մարտուն Գրիգորյանի բացման խոսքից անմիջապես հետո, ապագա ուսուցիչներն ուխտեցին լինել Ամենայն Հայոց Ուսուցչապետի արժանի հետևորդներն ու նվիրյալները:*

*Այնուհետև իր հայրական պատգամ-խորհուրդը տվեց ամենայն ազգիս Հայրապետը՝ շեշտելով. «Մշակույթն է, որ կկերտի հողը և կվերածի այն հայրենիքի: Այդ մշակույթին սպասավորներն եք դուք այսօր: Ես շնորհավորում եմ ձեզ, մասնավորաբար 1996-97 դպրոցական տարեշրջանի այս սկզբին և ի սրտե աղոթում եմ, մաղթում, որ կապվեք ուսման, ուսումը ապրուստի վերածեք, ձեր բարձրացման և հայրենիքի զարգացման ծառայության մեջ դնեք: Աստված թող օրհնի այս նոր սերունդը և մանավանդ նրանց տա հառաջդիմության, զարգացման, եղածին վրա նորը չինելու գաղափարին և գաղափարականին դիտակցությունը»:*

*Հանդիսությունն ավարտվեց «Պահպանիչ»-ով: Ապա Նորին Սրբությունը, հոգևոր դասի և հյուրերի հետ, առաջնորդվեց դեպի 88-ամյա բարեբար տիար Ջիվան Կոբոյանի միջոցներով վերաբացված Սուրբ Մեսրոպ Մաշտոց դպրատուն, ուր կատարվեց նորաբաց հաստատության օրհնության կարգը՝ ձեռամբ Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի:*

*Ներկաների ուշադրությունը հրավիրելով դպրատան դերին և ապագա խնդիրներին, շեշտելով մեծ հայորդու նվիրումը՝ Գարեգին Ա Կաթողիկոսն ի մասնավորի նշեց. «Երջանկահիշատակ Գևորգ Ե Կաթողիկոսը այս դպրոցին հիմքերը դրավ, ապա Վազգեն Երջանկահիշատակ մեր նախորդը մտածեց այն վերածել Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան թանգարանի, մենք թանգարանը և դպրության տունը միացուցինք: Ահավասիկ իրագործվեցավ այդ երազը: Թող երկինքեն երջանկանան Վազգեն Կաթողիկոսի և Գևորգ Ե-ի հոգիները: Անոնց հետ և անոնցմե բարձր թող բերկրի հոգին Սուրբ Մեսրոպ Մաշտոցի»:*

*Հավարտ իր խոսքի, Նորին Սուրբ Օծությունը տիար Ջիվան Կոբոյանին պարգևատրեց Հայաստանյայց Եկեղեցու ամենաբարձր պարգևով՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի առաջին աստիճանի շքանշանով, որից հետո իր սրտի խոսքն ասաց բարերարը:*

*Մ. Վ.*